ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ԴԻՄԻՏՐԵՎԸ ԽՈՍՈՒՄ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Վերջերս, խոսելով Սոֆիայում, Դիմիտրովն անդրադարձավ Հայկական պահանջներին։ Տալով հայ ժողովրդի ամփոփ պատմությունը, նա հայտարարեց.

«Պետք է պատրաստել Թուրք կառավարությանը, որպեսզի հայերին վերադարձնի Հայկական բոլոր նահանգները, և ոչ թե միայն Կարսն ու Արդահանը։ Հայկական բոլոր նահանգները պիտի կցվեն Սովետական Հայաստանին, որպեսզի Թուրքիայում և արտասահմանում գտնվող հայերը հնարավորություն ունենան վերադառնալու հայրենիք։

«Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, դաշնակիցները չկարողացան, կամ ավելի ճիշտը չուզեցին հայերին վերադարձնել Թուրքիայի լծի տակ գտնվող Հայկական հողերը, հակառակ հայ ժողովրդի ցուցաբերած հսկայական զոհողությունների։

«Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում, հայերը լայն կերպով մասնակցեցին դաշնակիցների հաղթանակին ընդդեմ հիտլերականության և ֆաշիզմի։ Սովետական Հայաստանը տվեց Կարմիր Բանակին իր լավագույն զավակները— 50 զորավար և քառորդ միլիոն զինվոր։ Ամերիկա, Ֆրանսիա և այլ Դաշնակից երկրներում գտնվող հայերը մեծ մասամբ զորակոչի ենթարկվեցին։

«Մինչդեռ Թուրքիան, Գերմանիայի կողքին կռվեց առաջին պատերազմի ընթացքում, իսկ երկրորդ պատերազմին չեզոքի դիմակի տակ համակիր էր հիտլերական Գերմանիային և երբ առիթ ներկայանար նա չէր վարանի արշավել Սովետական Միության և Հայաստանի վրա։

«Արդեն հասել է ժամանակը, որ հայ ժողովուրդը գոհացում ստանա իր պահանջներին։ Միացյալ Ազգերի Ապահովության Խորհուրդը պետք է արդար և անմիջական լուծում տա Հայկական խնդրին»։

(«Վերածնունդ» նոյեմբեր 11, 1946 թ.)

ՄՈՒՀԻՏՏԻՆ ՆՈՒՐԻ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԱՎԱՆԸ

Մուհիտտին Նուրիի գերզգայուն գրչեն ելած «Առաջին կարավանը» ներշնչված է Հալեպեն դեպի Սովետական Մայր Հայաստան մեկնող հայ գաղթականներու Ա կարավանեն, երբ Մոհաֆըզ Պեյը, լիազոր պատվիրակները, Առաջնորդ Հայր Սուրբը, քահանա, հայրեր, ներգաղթողներ և ողջերթի գացող բազմահազար հայ և արաբ եղբայրներ այցելեցին Սուրիո ազատագրության ռահվիրա հանգ. Իպրահիմ Պեյ Հանանոյի շիրիմը:

Ի՜նչ ծովածավալ բազմություն մարդոց... ծաղկեփունջերով ծանրաբեռնված։

— Ու՞ր կ'երթան անոնք։

— Շրջապատելու դամբարանը ազգային հերոս Հանանոյին։ Անոնք կզարդարեն շիրիմը բուրումնավետ ծաղիկներով ու բարձրաղաղակ ու լիաշուրթ կ'ոգեկոչեն հիշատակը հայրենասեր Մեծ Հերոսին՝ սրտաբուխ, անկեղծ ու հարգալիր ողջույններով։

Անոնք զավակներն են Սուրիո, ու կվերա-